



ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԻՍ


ԹԻՎ 35

10/23 ՄԱՐՏ 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԻՐ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատճառակա՛ն Շաբաթաբերը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ շաղկապա՛լ եւ ձոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տպելութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարելուք եւ ստոյգ ամէն լուրերն՝ համա- ոտօւած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մահաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերքէր կար- դալս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԳԻՐԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ.

Թուրքիոյ համար.

Տարեկան Դիէկ. արժ. 40

Վեցամսեայ » » 20

Արաստահման.

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » . 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մարտ-Բայտիլ եւ կամ մէկ մէկ դրոնոց նամակագրութեամբ:

Մէկ թիւ 1 Դահէկան

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Arm. Catholique

Péra Constantinople

ԾԱՆՈԹ. 1.— Այն-է-Նէ կը հրատարակուի Շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Չնուագիրներ ետ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Եւնուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Իրկորդ Տարի	10/23 Մարտ 1912	Թիւ 35
-------------	-----------------	--------

Լ Ե Ւ Ո Ն Ժ Գ Ւ

ԽՐԱՏԱԿԱՆ ՄԷԿ ԽՕՍՔԸ

Լուսահոգի Մեծ Քահանայապետին մէկ կոնդակէն հետեւեալ կտորը հոս կը թարգմանենք, իրաց վիճակին շատ յարմար խրատ մը ըլլալուն համար:

«Որքան կարեւոր է (կաթողիկէ) մտքերն համախոհ պահել, քանի որ մանաւանդ հիմա քրիստոնեայ անուան դէմ պայքար կը մղուի նեւ-զամիտ զաղափարներու տարածմամբ: Յայտնապէս ամէնը որ կը սիրեն յարած մնալ Եկեղեցւոյ, որ է սիւն և հաստատութիւն ճշմարտութեան (Ա. Տիմ. Գ. 15) շատ զիւրաւ պիտի զգուշանան «ոչ վարդապետներէ . . . որոնք աղադատութիւն կը խոստանան և ինքեանք ապականութեան քառայ ին» (Բ. Պետ. Բ. 1. 19) այլ մանաւանդ մասնակցելով Եկեղեցւոյ զօրութեան, պիտի խորտակեն խմաստնարար ամէն որոգայթ և արխաբար ամէն բռնութիւն: Տեղը չէ հիմայ խուզարկելու թէ կաթողիկեայներու

դանդաղ գործն ու ներքին տարաձայնութիւններն ի՛նչ և ո՛րքան չա՛հ ունեցան նոր ձեռնարկներու մէջ. բայց անշուշտ այդ մարդիկ ամենաթեթեւ յանդգնութիւնն իսկ չպիտի ունենային, ո՛չ ալ այնքան աւելի պիտի գործէին, եթէ սրտերնուն մէջ զօրեղագոյն հաւատք մը տածէին որ սիրով կրնայ յաջողիլ (Գաղ. Ե. 6), ո՛չ ալ այնքան ծայրայեղօրէն սուքի տակ պիտի երթար քրիստոնէական բարսւց բարեկարգութիւնը, որուն հոգը Աստուծոյ կողմանէ մեզ յանձնուած է: Իցի՛ւ թէ անցիալն այս ծգուտն ունենայ որ իւր յիշատակովն յապագային աւելի ուղիղ խորհիլ տայ:

«Սակայն հանրային գործոց միջամուխ եղողներն պարտաւոր են խստիւ զգուշանալ երկու պակասութիւններէ, որոնց մէկուն նենգաւ խոհեմութիւն անուն կուտան, և միւսն յանդգնութեան մէջ կը շրջի: Վասն զի ոմանք կը կարծեն որ ուժեղ և ձգտող անզգամութեան բնաւ դիմադրելու չէ, որպէսզի (կ'ըսեն) թշնամի հոգիներն ալ աւելի չի գրգռուին ի պայքար: Արդ այդպէս մտածողներն, չենք կրնար բռնի՝ Եկեղեցւոյ կողմն են արդեօք թէ անոր հակառակ. վասնզի կը հատուտան որ իրենք կը դաւանին կաթողիկէ վարդապետութիւնը, բայց միւս կողմանէ կ'ուզեն որ այդ եկեղեցին թոյլ տայ վարաւարտութեան ներհակ կարծիքներու անզուսպ կերպով տարածուիլ: Կը ցուին որ հաւատքն կը ստուռի հետզհետէ մարդկան սրտերէ, բարքերն կ'ապականին. հոգ չեն ընկեր սակայն դարման տանիլ չարեաց, այլ մանաւանդ չարաչար զիջողութեամբ կամ աղետալի անտարբերութեամբ մը չարիքը կ'աւելցնեն: Ասոնք մէկ կողմանէ կ'ուզեն որ ո՛չ ոք տարակուսի իրենց առ Ս. Գահն ունեցած յարուսին վրայ. բայց միւս կողմանէ միշտ դիտելիք կ'ուենանան Քահանայապետի ընթացքի մասին: Այսպիսի մարդկան խոհեմութիւնը յայտնապէս այն տեսակէն է, զոր Պօղոս Առաքեալ խորհուրդ մարմնոյ կը կոչէ, և մահ հոգւոյ (Հռովմ. Ը. 6. 7.), վասն զի «օրէնաց Աստուծոյ ո՛չ հնազանդի, նա՛ և իտրե իսկ ո՛չ»: Արդ՝ չարեաց առջեւն առնելու համար՝ ասկից նուազ խոհեմ խորհուրդ չի կրնար ըլլալ: Որովհետեւ թշնամիք չեն վարանիր յայտնապէս հռչակել և նոյն իսկ պարծենալէ թէ իրենց բացարձակ դիտումն է, կաթողիկէ կրօնքը, որ միայն ճշմարիտն է, բնաջինջ ընել հիմնովին, թէ կարելի ըլլայ: Եւ այս գիտմամբ ամէն միջոցի ձեռք կը զարնեն. վասն զի կ'իմանան իրենք ալ թէ որքան աւելի ազատ կը մնան չարիք գործելու մէջ: Անոնք ուրեմն որ կը սիրեն հարսնոյ խորհուրդ և կը կեղծեն չգիտնալ թէ ամէն քրիստոնեայ պարտաւոր է Քրիստոսի բարի զինուոր ըլլալ, որ կ'ուզեն յաղթողներու պատրաստուած վարձատրութիւնն ունենալ՝ սակայն տմենամեղի ճամբով մը և առանց մօտենալու իսկ պատերազմի, ասոնք՝ կ'ըսեմ, չատ հեռի են չարերու ճամբան խափանելէ, զոր մոմտանդ կը հարթին:

«Ասոնց հակառակ կան ո՛չ սակաւ անձինք ալ որ մոլար եռանդով

մը միուած, կամ լաւ եւս կրքով, ուրիշ բան կը գործեն և ուրիշ բան կը կեղծին ընել, որով իրենց սահմանին մէջ չեն մնար: Ասանք կ'ուզեն որ եկեղեցւոյ մէջ ամէն բան իրենց դատողութեան և ուղածին համաձայն կարգադրուի, և եթէ այլօրէն գործուի, կը դժկամակին անոր դէմ և կը հակառակին: Ասոնց ալ գործը յայտնապէս ունայն է և առաջիններէն ոչ նուազ պախարակելի: Վասն զի օրինաւոր իշխանութեան հետեւիլ չէ այս, այլ խանգարել զայն և միանգամայն տեսուչներու պաշտօնն յափշտակել առանձնական անհատներու ձեռքն տալու համար, ինչ որ բնականաբար մեծ խանգարում մ'է այն կարգի կանոնին, զոր Աստուած դրած է եկեղեցւոյ մէջ ցմիշտ պահելու համար և զոր կարելի չէ եղծել առանց պատժապարտ մնալու»:

(Կոնդակ Sapientiae Chistianae 10 Յունուար 1890):

ԱՏԱՆԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԸՆԸՆ ԹԵՄԻՆՏԷ ԳԱՊՈՒԼԻՅԷԹԻ (1)

Յէրոտաը Կիրակի սապահը Գերապայծառ Քէլլիքեան հաղրէթլերի Ս. Պատարագը վէ վաճիպ օլան տուալարընը իյֆա էյլէտիքտէն սօնրա, թէսլրիքէ կէլէն ճիւմէ միլէլի մուխթէլիֆէ բուէասայը բուհանիյէսինի, Ֆրանսըզ գօնսօլսուհու վէ սաիր միւթէհայիզանը պէլտէլի գապուլ էյլէտի իսէտէ՝ վագթըն տարլըզը հասէպիյլէ մուամիլէյհումանըն հիչ պիրիսինէ իստէի վիղիթա էյլէյէմէտի, չիւնքի սաաթ 8½ տա հարէքէթ իտէճէք թրէնէ հէթիչէպիլմէք իչիւն լանտօլար սօգադտա պէլլէմէքտէ իսիլէր: Ճէօմաաթտան չօգլարը կէրէք մէշիէն վէ կէրէք լանտօն սիւվար օլարագ սթասիօնա գատար ըէֆագաթ էյլէտիլէր, անլէրին մէյանընտա՝ իսթիգպալ իչիւն մուգատտէմա Ատանաստան կէլէն հէյէթի մախսուէտէն մաատա, պիլ ախէրէ Կիրակի կիւնի սապահ թրէշիյլէ Ատանա Գաթօլիք ճէօմաաթը միւթէհայիզանընտան կէլէն պազը զէվաթը քիրամ տախի մէվճուտ իտի: Թրէնին էանայը հարէքէթինաէ պիւթիւն ճէօմաաթա պիր տահա թէպէրրիւքնաթը փէտէրանէսինի վէրէրէք՝ անլէրտէն պիր գալպի մէսէրրէթ մէմլու իլէ միւֆարագաթ էյլէտի: Թրէն հարէքէթինտէն թախմինէն «2» սաաթ սօնրա Թարսուսա միւվասըլէթ էյլէտի: Շէհրի մէզքիւրիւն ֆազիլէթլու Ժողովրդապետի Գեր. Արսէն վարդապետ, Ֆրանսըզ գօնսօլս թրէճիւմանը Շաքիր Պութրօս էֆէնտի վէ Գաթօլիք ճէօմաաթընտան խապէրտար օլանլարըն ճիւմլէսի Աթասիօնա կէլէրէք՝ միւշա-

(1) Տե՛ս թիւ 32, էջ 57:

րիւնէյհ եպիսկոպոս հաղրէթլէրինի՝ ֆէվզ էլ ատէ հիւրմէթ վէ ռաղպէթ իլէ իսթիգպալ խառպ՝ խաթէմի շէրիֆինի թագպիլ էյլէտիլէր։ Թրէն՝ պիր չարեհէք սաաթ սօնրա Թարուսաան՝ Ատանայա միւթէվէճճիհէն հարաքէթ էյլէտի վէ ազշումըն ալաթուրքա սաաթ 12½ տա Ատանայա վասըլ օլուն-
ճա, հէր սընըֆ էհալիտէն միւթէշէքքիլ պիր ճէմի զաֆիր պթասիօնտա Գերապայճառ հաղրէթլէրինի քերարէն ալզըշասարլար։ Ճիզուլիթ թարի-
գաթընտան րէիս Բէր Անտրէ վէ մայէթի րէրլէր վէ ֆրէրլէր, Սիւրիանի Գիլտանի վէ Բոււմ Գաթօլիք միւթէթէրէմ ժողովրդապիպլէրի ճիւմլէթէն՝ Սթասիօնտան Գիլիսայա գասար Լանտօնլար իլէ րէֆազաթ էյլէտիլէր։
Մէվսիմ իզթիգասը օլարազ հիզուլ իտէն պարանըն քէսրէթիւնտէն հասըլ օլան չամուրլար վէ չիրքեսապլար իլլինաէն հայան հիւրիւշէն պիր չօգ էշ-
խաստան մատտա՝ Լանտօնլարըն ատէտի երկիրմիլի միւթէճաւուզ խաթ, պէօյլէճէ խարիզ իւլ ատէ պիր իզտիհամ իլէ Գիլիսանըն ճիւմլէ գարու-
սընա միւշարիլէյհ եպիսկոպոս հաղրէթլէրի վասըլ օլունճա՝ էհալի իքի սընըֆ ու էքնաֆա միւնգասըմ օլարազ զայէթ սիւքիւնէթլէ վաճիպ օլան ինթիլըամաթա սամաթ օլաուլար։ Պու էսնասէ Բէքլիքեան Գերապայճառ էֆէնտի Լանտօնտան էնէրէք՝ րէմի էլպիսէյի րուհանիւթինի լապիս օլտու պաշտա չաթալ թագ, սօլ էլինտէ եպիսկոպոսական գաւազան վէ սաղ է-
լինտէ պիր խաշ օլուպ էթրաֆ ու էքնաֆընը տաիս պալատէ մէգքիւր րուէստայը րուհանի իհաթէ էյլէմիշլէր խաթ, էօնտէ զպիլլէր զայէթ լաթիֆ Հրաշախառ հաղմէսինի չէվզ ու սիւրուր իլէ թէղաննի խոյճօրլար վէ միւշարիլէյհ Հայրապետ տախի՝ սաղ վէ սօլտա սաֆլար թէշքիլ իտէն ճէօ-
մաաթը թէպէրրիւք իտէրէք Գիլիսանըն Աւագ խորանընա վասըլ օլաու։ Օրատա միւթասըլ իւզէրէ տիլլէրի իւզէրինէ կէլէրէք՝ էառլէի չիւքրանըն պատ էլ իյֆա՝ ճէմաաթա խիթալ օլարազ՝ մուխթասար ֆազաթ զալէթ մանալը սուրէթտէ՝ չէօյլէճէ իրատը քէլամ էյլէտի։ «Մէվկիւլիւ էվլատ-
լարըմ՝ րուհանի րէիսի էքպէրիմիզ Սրբազան Քահանայապետին էմր ու իսրարը իւզէրէ՝ էօնտէմէ իհալէ օլունան իշպու վաղիֆէյի մուզատտէսէյի լա իլամ գապուլ էյլէտիւմ։ Իշպու մէվզիի շէրէֆին՝ լիսգաթըմ մա ֆէվ-
զինտէ խոյլինի՝ վէ անըն վէզաիֆի իտէ թապ ու իզթիտարըմ խարիճին-
տէ օլտուզունու էյի պիլիր իտէմտէ՝ ֆազաթ մահզա չու ճիհէթինէ գա-
վիէն էմինիմ քի, էվվէլա ճէնապը Բապպը Միւթէալլին միքնէթպախշ հար-
աըմը՝ վէ սանիէն րուհում գասար սէվկիւլիւ ճէմաաթըմըն հազգըմտա իպրազ պուլուրաճաղլարը միւվէտտէթի խալիտէ վէ ուպուսիլլէթի ֆէրզէն-
տանէլէրի սայէսինտէ՝ ճիւմլէ ումուրը մուհիւմմէ վէ վէզաիֆի փէտէրա-
նէմտէ մուվվաֆիֆազ օլարազ, վէ զիյրի խտարէմաէ պուլունան սաաըզ սիւրիւմիւ թարիգի հաղիգիտէ իրչատ էյլէյերէք՝ նէթիճէսինտէ՝ ինչալլան ու թապա հուզուրը Պարիտէ ճիւմլէ ճէմաաթըմա մէսուս օլուր վէ ի-
լէլէպէտ րապալըն ճէլալընը Թաղիմ էյլէրիւմ։ Ամէն։ Միւշարիլէյհ եպիսկո-
պոս հաղրէթլէրի խաթիւմ քէլամտան սօնրա խուսուսի սուրէթաէ թէֆրիշ

օլունմուշ զապուլա մախսու Սալօնա կիրտի վէ օրատա տախի պազը մէրասիմի վաճիպէտէն սօնրա Գերապոտիւ Գրիգոր Վ, Հատիկեանըն թահ-տը իտարէսինտէ պուլունան էյթամ վէ լէյլի Թալէպէկեան թարաֆընտան՝ քէզա Անարատ Յզութիւն թարիգաթընա մէնսուպ րահիպէլէրին զիյրի ի-տարէսինտէ թալիմ ու թէարիս օլունան զըզլար թարաֆընտան միւթէա-տիտ նութզլար գրաաթ , օլունսու, պու նութզլար մէյանընտա տախի պազը խօչամէտի նազմէլէր թէզաննի օլունընթօր իտի: Պատէհու Գեր. Յովհաննէս Վ. Խալիսովիան տախի մէվզուն պիր ուզերձ գրաաթ էյլէտի: Անը միւթէազըպ ձիզուիթ լէիտի ֆազիլէթլու Բէր Սնտրէ ֆրանսըզձա, վէ Հիւրմէթլու Ապունա Իլիաս Թամպի՝ թիւրքձէ օլարազ զայէթ պէլիզ սուրէթտէ նութզլար իրատ էյլէտիլէր վէ հազըրուն թարաֆընտան տէ-ֆաթլէ ալզըչանսըլար: Իշպու նութզլար վէ թէպրիքլէր խիթամընտա՝ սալօնտա վէ սալօնուն իտարիճինտէ՝ պէօյլէք պիր օտատան մատաա Գօ-րիտօրլարտա վէ նէրտիւպանլարըն գատէմլէրինտէ խընճախընճ տուրան իզաիհամ՝ եէկիան եէկիան՝ սէմահէթլու Բէքլիքիան Գերապայծառըն նէզ-տինէ վարարազ՝ իաթէմի շէրիֆինի հիւրմէթի թամմէ իլէ թազպիլ էյ-լէտիլէր վէ պէօյլէճէ կէճէնին՝ թազըրիպէն ալտ թուրքա սաաթ պէչինտէ խօչամէտի վէ հիւանիւ գապուլ մէրասիմի զայէթ մութանթան սուրէթտէ խիթամ պուլտու: Փէրտասը կիւն ճիւլէ միլէլի մուլթէլիֆէ բուէսաայը բուհանիտի, Փրանսըզ գոնսօրս թէրճիւմանը Լութֆիկ էֆէնտի, վէ շէնրին էչրաֆ ու միւթէհայկանը եէկիան եէկիան կէլէրէք թէպրիք ու թէհնիյէ էյլէտիլէր: Միւշարիլէյհ Եպիսկոպոս հաղրէթլէրի՝ էն էլվէլ տէվլէթէ օ-լան սատագաթ վէ ուպուտիլէթինի իպրազ վէ թէպէյեիւն իչուն Վալիի Վիլայէթ Մուսամէր պէյ հաղրէթլէրինին մազամընա կիթտի: Միւշարի-լէյհ Վալի պէյ հաղրէթլէրի զայէթ իլթիֆաթլա զապուլ վէ պիր միւտտէթ սուրէթի թէվէճճիւհքեարանէտէ միւլագաթ էյլէտիքտէն սօնրա եէկտիկէ-րինտէն միւֆարագաթ էյլէրլէր:

Գ. Ա. ՊԱՂՁԷՃԵԱՆ

2/15 Յոնի. 912 Արամն

ԿԵՍԱՐԻՈՅ ԵՊ.ԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻԻՆԸ

Կեսարիոյ մեր սեփական թղթակիցէն կ'ընդունինք եւ կը հրատարակենք հետեւեալ նամակը:

«Մօտերս երբ Ամնապ Թէրզեան Կ. Պարիարքը նորօծեալ Հայ-րապետնիրու հետ վերադարձաւ Հռովմէն, «Մէճմուտի ախպար» լրագիրը

իր գործունէութիւնը կրկնապատկեց և անհուն մարտաջ մ'ունեցաւ որ իր փափազներն... արձագանգ գտնեն գաւառներէն... կը պահանջէր որ բովանդակ գաւառները ոտքի ելլեն, ստունգանեն, հետտեն, պրտան, բողոքեն, վտնեն, արտաքսեն և խայտառակին նորընտիր և գերընտիր Հայրապետները. և վերջը այս ամօթապարտ յաղթութեան փողփողուն դափնիներուն ծանրութեան ներքեւ տքալով խայտան:

Սակայն իրողութիւնը, գէթ թեմերու մեծամասնութենէն, ասոր հակընդդէմ ներհակը պարզեց մեր առջև. խուլ մնացին անոնք, և վիճակաց այս տեսակ վերաբերումը յուսահատեցուց, ջլատեց, գերազրգուց... նոյն թերթը: Սկսաւ վաւերականութիւնը չստուգուած նամակներ հրատարակելու...: Ես հոս ասոնցմէ մէկ հատը միայն պիտի յիշատակեմ, որովհետեւ ան զիս աւելի կը շահագրգռէ, յածելով Կեսարիոյ թեմին շուրջ. սակայն ապէ՛ կը հետևեցնեմ որ անպատճառ միւս թեմերու մասին գրուածներուն մեծամասնութիւնն ալ յերկրորդած ըլլալու են: Ուստի լոյս-աշխարհը թող լսէ. Մէճհա— թերթը իր 4945 թիւին մէջ այսպէս կ'ըսէր. «Գայսէրիյէտէ տախի էրմէնի Գաթօլիք ճէմաթը պէյնինտէ... եէնի եպիսկոպոսարընը ԳԱՊՈՒԼ ԷԹՄԷՄԷՅԷ հազրըլանմազտա օլտուգլարը մահէլինտէն հազըլմըշ տըր:» Եթէ չհասկցող մը կայ, թարգմանեմ. «Կեսարիայէն եւս գրուած է թէ՛ Հայ կաթողիկէ ժողովուրդը պատրաստութիւններ կը տեսնէ իրենց նոր եպիսկոպոսը ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ համար: Լսեցի՞ք հիմա Կեսարիայէն Մէճմուայի գացած նամակը... անհունապէս կը հետաքրքրուիմ գիտնալու այս նամակին ստորագրութեան տէրը. եթէ չեմ սխալիր, անշուշտ քառասներորդ դարու ծնունդ պիտի ըլլայ ան...: Բայց աւա՛ղ, ստիպուած ենք ըսելու որ իրողութիւնը Մէճմուայի առեղծուածին չհամապատասխաներ ընաւ...: Կ'երեւի թէ ոսկեզօծ երազ մը տեսեր է...: Արդեօք անոր համար է որ Կեսարիայէն իրեն ուղղուած բողոքի և հերքումի թուղթերը յամառելով չարտատպեց, սեպելով զանոնք իր երազին իրականութիւնը նսեմացնող զգայամոլ խաբկանքներ... այսքան խելացնոր հոգեթողութիւն քիչ մը չափազանց է... Մէճհա— պայքար կը մղէ լոյսի դէմ. «Տեղի տո՛ւք, ուրեմն, աստղներ»:

Լսէ՛, արդ, մ'վ Մէճհա—, թէ Կեսարացիները ի՞նչ ընդունելութիւն ըրին իրենց Արհիպատիւ վիճակաւոր Անտոն եպիսկոպոս Պահապանեանին:

Երբ Ուլու-Գըչլայէն Նորին Ս. Օծութեան ընթացիկ (փետր.) ամսոյ 12 Կիրակի օրը Կեսարիա հասնելիք ըլլալուն հեռագիրն առնուեցաւ, վաղընդփոյթ եպիսկոպոսական փոխանորդ Գեր. Մեսրոպ վ. ին աշալուրջ ձեռներեցութեամբ մասնաւոր պատուիրակական մարմին մը կազմակերպուեցաւ բաղկացեալ մէկ եկեղեցական և երկու աշխարհական անդամներէ—Վարդան Վ. Սաչէրեան, Մ. Դանիէլ Թէլլալեան և Յակոբ Ճաղմատարեան էֆէնտիներէ,— որոնք պատուաւոր վաճառականներ ըլլալով,


չաքաթ օրուան իրենց պաշտօնական և կարեւոր գործառնութիւններն անգամ լքելով մինչեւ երկու աւուր ճամբայ, մինչեւ Տէլէլի Գարահիսար կլին ընդ առաջ փեսային:

Քաղաքին մէջ բոլորն չարժու մը սկսաւ, ամէն ոք առանց բացառութեան չքեղ դիմաւորութիւն մը ընելու կը պատրաստուէր. զգացումները վառ էին և գործունէութիւնը անհնարին, օր առաջ գրեթէ բոլոր կառքերը և ձիերը վարձուած էին, տենչանքի սաստկութենէն ամէնուն սիրտը կարծես աւելի հուժկու կը բաքալէր: Գարահիսար գացող պատգամաւորական մարմինը, հոն Նորին Արհի. Օծութեան առաջին անգամ Սուրբ Աջը առնելու պատուոյն արժանանալով և սրդիական սրտով բարի գալուստ մաղթելով, փոխանորդաբար Կեսարիոյ հայ-կաթողիկէ ժողովրդեան վառ զգացումներուն և իր հովուական մականին հյու հպատակութեան թարգման կը հանդիսանան:

Ի դարձին Ինճէ-Սու հասնելով—քաղաքէն 6 ժամ հեռու գիւղ մը,— կը գտնեն հոն ուրիշ պատգամաւոր մարմին մը կազմուած Մ. Յակոբ Խորասանեան, Մ. Վիչէն Փալամուտեան և Կարապետ Բէմպէճեան էֆէնտիներէ, որոնք նախընթաց օրէն եկած էին և յատուկ տուն մը վարձելով չքեղօրէն յարդարած էին յանդորութիւն Ն. Ս. Օծութեան: Ասկից կառքերու թափօրը չարժելով տակաւին քաղաքէն 4 ժամ հեռաւորութեան վրայ կը հանդիպին դիմաւորութեան եկող խումբ մը ձիաւոր երիտասարդներու որոնք Արհի. վիճակաւորին Աջը համբուրելով, սրարչաւ կը սաւառնին աւետելու համար բազմութիւնը: Երբ պատկառելի վիճակաւորին չքակիր կառքին առջեւ Կեսարիոյ ընդարձակ դաշտը կը պարզուի, անդուստի բացուստ կը նշարուէ խուռն բազմութիւն Ամպար գիւղին ծառաստանին մէջ խռնուած: Ելեսունէ աւելի կառքեր, որոնց արջնաթոյր և խայտաւոր երանգները, ներդաշնակուելով երկնագոյն ահագարանոց երկվարներու գոյնով և ցլանալով այս օրերս բացառիկ կերպով փողփող շողացող արեւուն ճառագայթներուն հանդէպ, անթարթ աչքերն անգամ կը խողտէին: Ութսունի մօտ ձիաւորներու խումբ մը որոնց մէջ մասնաճիւղի կերպով կը զատուէր Հայ-Կաթողիկէ երիտասարդաց խումբը, ինչպէս օր առաջ կարգադրուած էր, ամէնքը միաձեւ հագուած, Եգերական կափունճաները ուսերնին, համաձեւ և համաչափ պատկառանքով կ'ընթանային: Երբ Ն. Օծութեան կառքը մօտեցաւ, ձիավարները խորխոր մըցումի սկսան, սալասմակ սաւառնուն սասաիկ սլացող ձիերը կը թռչէին կարծես, ահագին աղաղակ մի է որ ըրդաւ: Հոն բազմութեան կեդրոնը փութացիր էին քաղաքէն շատ մը պաշտօնական մարմիններ, կառավարութեան պաշտօնեաներ, քաղաքապետական նուիրակներ, հոգեւոր հաստատութիւններու պատգամաւորներ, Առաջնորդարաններու նեկայացուցիչներ, իրենց քաղաքական և վարչական ժողովներու անդամներով: Հոն եկած էին Կեսարիոյ Եպիսկոպոսական փոխանորդ Գեոր. Մեսրոպ Վ. Բէ-

չիշեան, նաեւ Յոյն հասարակութեան Եպ. փոխանորդներ. Յիսուսեան Հարք
եւն. : Հոյն ծառերուն ներքեւ ծաղկեհիւս օթոցներու և քաղքէն բերուած
աթոռներու վրայ բազմած, տեղի կ'ունենայ, կարճառօտ կերպով տեսակ-
ցութիւն և լուսանկար կ'առնուի և այլեւայլ մարմիններու կողմէ բարե-
գալստեան մաղթանքներ ըլլալէն վերջ, կազմուեցաւ աւագ սարսուզդե-
ցիկ թափօրը, բոլոր ձիաւորները հիանալի կազմակերպութեամբ մը չորս
չորս յամրաքայլ և պատկառալից կը յառաջանային, կառքերը շոնդալից
կը թաւալէին կարծես ուրախութիւնէ ցնորած : Բազմութեան ազագույր
օլը կը թնդացնէր, մարդկային մարմիններու ահագին զանգուած մը,
կարծես լայնանիստ բռնակ մ'է, որ չողշոյուն և սուղ յալթութենէ մը
վերջ երջանկութեամբ արբոյռ քաղաք կը դառնայ :

(Շարդ-նալէլի)



ՇԱՅՆԸ ԹԱՆՍԻՆ ՊԻՐ ՖՈԻԳԱՐՈՐԵՐՎԷՐ ՃԵՄԵՅԼԵԹԻՆԻՆ ՖԱՍԼԵՅԼԵԹԻ



Պիր միւտաւթալէն պելու, Ատանա ժէզվիտէր բէհապիյնի մայե-
թիւնտէ մէվճուտ օլան «Սէն-Վէնսան-Տը-Բօլ» նամընտաքի ֆուգարարէր-
վէր ճէմիյէթի, պու տէֆա՝ խայրիտահանըն քէսէլէրինի միւհթաճիյնէ
զարչը պիր գաթ տահա աշտըրմագ մագստտը իլէ, բէհապիյնի միւմաի-
լէյհիւմա մէքթէպի տախիլիւնտէ պիր թէաթրօ քիւչաա խալիմէք իւզլիէ
փետր. 18 բաղար կիւնիւ ագչամը սուրէթը քեամիլէտէ պիր սալօն հա-
զըրլանմը խաի :

Սալօնը մէզքիւր, ճէմիյէթի ֆապիյէ վէ միւհթէրէմէ թարաֆըն-
տան տէօրթ ֆարգլը մէվագիյէ թագսիմ օլունմը օլարագ Նսճի մէվգի
իչիւն 1 իրա, Չսճի մէվգի իչիւն 3 մէճիաիյէ, Յսճի. մէվգի իչիւն 2
մէճիաիյէ, վէ 4սճիւ մէվգի իչիւն իսէ պիր մէճիաիյէ գըյմէթ մուգալ-
րէր օլմուչ խաի :

Եւթմը մէզքիւրըն կիճէ սաաթ իքիսինտէ տալէթլիլէր հազըր
պուլընտըզարը հալտէ բէրտէ աչըլըպ, պիր գարանլըզ մաղարայը միւ-
թէսավվուր մէնդարէ միւչահէտէ օլունարագ, իքի հարամիւնին ճալիպի
տիգգաթ պիր հալտէ հէկաիկէրիլէ միւքեալէմէյի միւզայըզալարը կէօ-
րիւլմէքտէ խաի : Պու մէնդարէ իսէ հազըրունըն տէրէճէի նիհայէտէ
էնդարը միւթէհայիրանէսինի պատի օլմուչ խաի : Պիր միւստէթ սօնրա
տիկէր հարամիլէրին իքի սապի էսիլէրի մաղարա տէրունինէ կէթիւ-
տիքլէրի կէօրիւլաիւքտէ, հազըրուն ֆէվզէլատէ պիր թէէսսիւֆի ազիմէ

աիւչար օլտու: Բէրտէ գաբանըլարագ մուզիգալարըն հայաթպախս սէ-
տալարը սամիյունա եէնի պիր հայաթ վերիյօր իտի: Իքինճի բէրտէ ա-
չըլըպ էսիր մահաումլարըն մազարա տէրունինտէ, պիր քէօչէճիքտէ տէ-
րին պիր ույգուլա տալորդլարընըն մէնզարէսի, հագիգաթէն ինսանըն
պիւթիւն գալպինի տիւչարը էնտիչէ իլէ կէօզ հաչլարը ճէրէյան էթտիր-
մէքտէ իտի: Վէ հէլէ սապիլէրտէն պիրիսինին մէյուսանէ թէրլննիւմիւ
իլէ վալիտէսինի թէխայիւլ էյլէմէք վազասար հէրքէսին ճիկէրինի բարէ
բարէ էթմէքտէ իտի: Պատէհու բէրտէ գաբատըլարագ, ճէմիլէթի միւհ-
թէրէմէ բէիսի Նամի էֆ. Լապաքի թարաֆընտան հուզղարը զէվ իւլվու-
զուրա օսմանըճա վէ ֆրանսուզհա իտանլար իլէ պէյանը մէմնունիլթ
վէ միւթէչէքքիւրաթի թագտիմի իլէ խայրիահանըն քէսէլէրինէ Ճէնապը
Հազղըն թիւքէնմէզ պէրէքէթինի տալլթի մուճիպ, պիր գըսաճա նութգ
իրաւ իտիլուպ ալգըլլար իչինտէ խիթամ վէրիլտի: Նիհայէթ, իւչիւնճիւ
բէրտէ աչըլարագ հարամի պէյլէրինին պիրիսի էսիր մահաումլարը գուր-
թարմազ մազասաընտա պուլունսըլընտան, զէնճիրպէնտ օլարագ զըն-
տան կիրատուլընա աթըլըն օլարըլը կէօրիւլիւնճէ հազըրուն զայէթ միւ-
թէհայիրանէ թէմալա էթմէքտէ իտի: Էննիհայէ թէաթթօ իւչ պուչուզ
ստաթ տէվամտան սանլու մէվճուտիյն թարաֆընտան ֆէվզէլատէ ալգըլ-
լանարագ խէլլամ պուլտու:

Իչպու ճէմիլէթի թէչվիգ էթմէք վէ մէթանէթ վէրմէք իւզրէ,
բէհապլինի միւմալիլէհիւմա բէիսի ֆալ. Բէր Անարէ էֆ. հազրէթլէրի
25 լիրա գատար իհսան խտէրէք մուսվէնէթտէ պուլունսըլ տըր:

Եէթէրեան Յալհանէն էֆ. 5 լիրա, Մ. Լուիճի Տրաքի 2, Սը-
մէքեան Յարութիւն էֆ. 2, Տօք. Պետրոս էֆ. Լապաքի 2չէր լիրա,
Էրմէնի Կաթողիկոսը Վէ. Տ. Սահակ Սըրազան 1, Մատամ Շարթիլէ 1,
Ինկիլիզ վիս գօնսօլօսը 1, Ալման վիս գօնսօլօսը 1, Աճէմ վիս գօնսօլօ-
սը 1, Պանղը Օսմանի 1, Ալման պանգասը 1, Աթինա պանգասը 1,
Սուպհի բաչա (պէլէտիլէ բէիսի) 1, Մէքթէպը Սէնայի միւտիրի Ալի էֆ.
1, Մ. Բօրպէթթի (բէմի նազըրը) 1, Մ. Վինքլէր (Պաղտաս խաթթը
նազըրը) 1, Մ. Բօրիօ 1, Մ. Ժօրմ Լութֆուլլահ 1, Մ. Կրիկորիասիս
1, Հօճա Էլեան Թիւրքմէն 1, Կոսդանլին էֆ. Թրքանի 1, Արիսթիա
էֆ. Սիմիոնօղլու 1էր լիրա վէրմիլէր տիր:

Յ. ՊԱԼԵԱՆ

ԱՆԿԻՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՒ ԼԻՎՈՆՈՅ ՔԱՂԱՔԸ (1)

Այսպէս կը շարունակէ եւ կը վերջացնէ Լիվոնոյի Ֆէրթ թերթը.

«ՊԱՆՔԱՊԱՆԵՍԱՆ ԵՊՍ. ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ. — Պահապանեան Գերապայծառ արցունք թափելու աստիճան յուզուած, ոտքի կ'ելլէ, ու հաւատացեալներուն դառնալով կը խօսի ինչ որ կը ներշնչէ իր սիրտը: Հոս համառօտենք իր խօսածը ինչպէս ափյափոյ կրցոնք սղաղբել:

«Արհի. Գերպօ. Տէր, Գեր. եւ մեծայարգ Կանոնիկոսներ, Յոյժ յարգելի մեծաւոր-ժողովրդապետներ, Գեր. քահանայք եւ ազնիւ Լիվոնոցի հաւատացեալներ:

«Աստուածային Տեսչութիւնը, իր խորախորհուրդ կարգադրութեանց համաձայն, առանց իմ ո եւ է մէկ արժանեացս, ուզեց բարձրացնել իմ տկար անձս Քահանայական աստիճանի լրութեան, եպիսկոպոսական այս վսեմ պաշտօնին: Քաջ ճանչնալով իմ անարժանութիւնս եւ իմ կարողութեան անբաւականութիւնը, շատ աղաչեցի մեծաւորներուն՝ որպէսզի ազատ կացուցանեն զիս այս լուծէն, այս մեծ պատասխանատուութենէն, բայց օգուտ մը չունեցաւ:

«Եւ վերջապէս Ս. Հօր եւ իմ յոյժ սիրելի Պատրիարքիս ստիպիչ հրամաններուն վրայ պարտաւորեցայ տեղի տալ ու համակամիլ Աստուծոյ սուրբ կամաց:

«Այդ վարանման ժամերուս՝ Հռովմ եղած միջոցիս, մեծ մխիթարութիւն ու քաջալերութիւն եղան ինծի՝ Գերապայծառ աէր, այն հայրական խորհուրդները զորս հաճեցաք տալ ինծի Ձեր այն թանկագին նամակներով զորս զեռ կը պահեմ ու միշտ պիտի պահեմ մասունքի մը պէս: Գեր. եւ մեծայարգ Կանոնիկոսներու, յոյժ յարգելի մեծ-ժողովրդապետներու՝ որոնք իմ սիրակցորդ եղբայրակիցներս էին, ինչպէս նաեւ եռանդուն քահանայից եւ ազնիւ Լիվոնոցիներու ջերմեանդ աղօթքներն ու անկեղծ շնորհաւորութիւնները զիս մեծապէս սրտասնդեցին ու քաջալերեցին: Այս մասին շնորհապարտ ու երախտագէտ եմ ամէնուն ալ: Բայց անոնք չբաւականանալով այս բոլորէն՝ ուզեցին նաեւ արաւքուստ եւս պարզել ինծի հանդէպ ունեցած իրենց համակրանքը, իրենց յարգանքն ու ազնուութիւնը՝ այսքան չքեղ ընդունելութիւն մը սարքելով ինծի ու նուէրներ ալ պատրաստելով: Այո՛, ծայրաստիճան յուզուած եմ ու միանգամայն չիտթած կ'զգամ ինքզինքս: Այդ գեղեցիկ նուէրները թանկագին են ինձ համար, ու յիշել պիտի տան ամէն տեղ եւ ամէն ժամանակ անոնց նուիրատուները, զի այն նուէրները կարկառուն ապացոյց մը են

(1) Տես՝ թիւ 33, էջ 76:

նուիրատուներու այն ազնուութեան, սրտագին հիւրասիրութեանը՝ զոր 16 տարի շարունակ վայելցելի Աստուած փոխարէնը պիտի հատուցանէ անոնց :

«Իմ կողմանէ սրտանց պիտի ազօթեմ Տիրոջ՝ իրենց համար, այս թեմի պատուական Հովուին համար, Գեր. Կանոնիկոսաց արժանայարգ դասուն համար, եռանդուն ժողովրդապետաց խումբին համար, բոլոր քահանայից ու բարի Լիվոնացիներու համար. ի մասնաւորի իմ ազգակիցներու համար՝ որոնք միշտ այնքան փափկանկատութեամբ ու ազնուութեամբ չրջապատած են զիս :

«Այժմ իրենց ջերմեռանդ ազօթքները կը հայցեմ որպէս զի կարենամ Սրեւելքի մէջ ճշդօրէն կատարել իմ սուրբ պաշտօնիս պարտաւորութիւնները :

«Ծանր է,—կը յարէր Գերապայծառը— ծանր է ինծի մօտ առեւնէն հեռանալ ձեռնէ, և այժմէն արդէն սոյն մտածումը դժպիլի կը թուի ինծի: Քաջայայտ եմ թէ Աստուած պիտի սրտապնդէ զիս. եւ ես միացած պիտի ըլլամ միշտ ձեզի հետ հոգւով ու սրտով. միացած պիտի ըլլանք մենք ամէնքս ալ Յիսուսի ամենասիրելի սրտին մէջ. տոտուածային նոյն այն սէրը պիտի բռնիկէ ամէնքս ալ մեր կոչման ու մեր հոգիներու փրկութեան զժողովրդին ճամբուն մէջ :

«Ամենապատու Կոյսը, Մօնթէնէրոյի Տիրամայրը պիտի պաշտպանէ զմեզ. ամէնէն առաջ պիտի պաշտպանէ մեր սիրելի Լիվոնոյ քաղաքը՝ որնոր այսուհետեւ երկրորդ հայրենիք մ'եղած է ինծի համար, պիտի պաշտպանէ նաեւ իմ թեմս, Անկիւրիոյ քաղաքը, իմ ծննդավայրս՝ որու համար ընտրուած եմ. յիշատակը այս երկու քաղաքներուն անանջատ պիտի մնայ միշտ ինձ համար :

—Ու կ'եզրակացնէ.— Բնա՛ւ կարող չեմ արժանապէս բացատրել իմ երախտագիտութիւններս որքան ըրիք ինծի համար, միայն սրտանց կը մաղթեմ որ Աստուած չնորհէ ձեզ ամէն բարիք, որպէս զի կարող ըլլաք վայելել այն խաղաղութիւնը՝ զոր Տէրը բերաւ այս աշխարհի վրայ և որ արժանի վարձքն է ձեր սրտի ազնուութեանը» :

«ԳԵՐՈՊԾ. ԹԷՐՁԻՊԱՇԵԱՆ Ծ. Վ.Ի ՃԱՌԸ.— Գերապոյծ. Գէորգ Ծ. Վ. Թէրզիպաչեան Հայկական Սինոդոսի Զատագովը, կը կարդայ հետեւեալ գեղեցիկ ճառը՝ զոր հոս մեծ գոհունակութեամբ կը զնենք ամբողջապէս :

«Իմ յոյժ յարգելի Պատրիարքս՝ Նորին Գերերջ. Ամեն. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, իր բոլոր թեմական Արքեպիսկոպոսներով ու Եպիսկոպոսներով, որոնք յԱզգային Սինոդոս գումարուած էին ի Հռովմ, նորին Սրբութեան Պիոս Ժ. Քահանայապետի հովանաւորութեան ներքեւ, խորապէս յուզուած տոյն փափուկ և անկեղծ զգացումներէն զորս Զեր Գերապայծառ Տէրութիւնը կը հաճէր, իր արժանընտիր Կղերին հետ միասին

Ջերմօրէն արտայայտել . այն բոլոր հնարամիտ ձեւերուն տակ զորս կարող է ներշնչել ճշմարիտ ու սուրբ սէրը . հանդէպ Արհի . Գրիգ . Նպ . Պահապանեանի իր եպիսկոպոսական վսեմ տառիճանին բարձրանալուն , և իրեն այնքան սկիւի եղած Լիվոնո քաղաքը վերադառնալուն առթիւ , փութաց' ի նշան ուրախութեան , զրկել զիս հոս , թարգման հանդիսանալու իր և Սինդոսի զգացումներուն , Գերապայծառ Տէր , Ձեր' ու Ձեր արժանընտիր կղերին քով :

Նուիրական պարագ մը , ու միեւնոյն ատեն ծայրատիճան մեծ երջանկութիւն մըն է ինձ համար , Արհի . և Գերապայծառ Տէր , Ձեր Տէրութեան ներկայացնել զգացումները Ամեն . Պատրիարքին ու Արհի . Սինդոսական Հարց , զգացումները Ջերմ և անսպառ երախտագիտութեան և անկեղծ չնորհակալութեան , այնքան աւելի բուռն որքան ինքզինքնուն հանդէպ եղած կը նկատեն Հայ Նուիրապետութեան մէկ յարգելի ու սիրուած անդամին համար սնրքուած սոյն պատուոյ ցոյցերը : Ինք , արդէն զարդարուած Ս . Հոգւոյն ընտիր ընտիր պարգեւներով , ա'լ աւելի ճոխացաւ կրօնարոյր մթնոլորտին մէջ գեղեցիկ Իսիմիոյ' որ երկիրն է Սուրբերու , հայրենիքը' մարդկութեան պատուաբեր բոլոր մտաւորական ու գեղարուեստական մեծագործութիւններու , օրհնեալ հողը' ուր կը բազմի Հոռովմի յաւիտենական զահուն վրայ Յաջորդ Մեծին Պէրրոսի . Ինք խղճմտօրէն ընդօրինակեց այն չքնաղ առաքինութիւնները' որ այնքան չքեղօրէն կը պծնեն անձը Ձեր Արհի . Գերմ . Տէրութեան , ու պիտի արդիւնաւորէ զայն եպիսկոպոսական կնճռեալ փշալից վիճակին մէջ' որ պատառադրուեցաւ իրեն Յիսուսի Բրիստոսի Փոխանորդ գերագոյն Նուիրապետի Իշխանութեամբ :

«Այս աննախընթաց սիրոյ պոռթկումէն ապշահար' այսպէս կրցանք ուրեմն մեկնել զայն , այսինքն թէ Ձեր Արհի . Տէրութեան բարեապագամութեան մէկ արգիւնքն էր ան , եպիսկոպոսի մը հանդէպ' որու վրայ կը ցոլանային Ձեր հազուադիւս առաքինութիւնները : Հետեւաբար , այսպիսի և այսչափ որոգեզումներու տմբողջ պատիւն ու փառքը գովեստի ուղիս մը կը կազմեն Ձեզ' ու Ձեր յարգելի կղերին համար : Մեր Նուիրապետութեան , մեր սիրելի Հայաստանի համար անջնջելի պիտի մնան այս փառաւոր ցոյցերը գորովայ' Ձեր Գերապայծառութեան , եղբայրական սիրոյ' Ձեր օրինակելի կղերին , յարգանաց' Լիվոնոյի Ձեր բարեպաշտ ժողովուրդին . այո' , անջնջելի' պիտի մնայ այս սիրելի յիշատակը , ոտկատաքանդակուած մեր եկեղեցւոյ յիշատակարաններուն և մեր ապագայ սերունդի սրտերուն մէջ :

«Մինչ կը հաղորդեմ Ձեր Գերպոյժ . Տէրութեան ու բոլոր Ձեր հպատակներուն Ջերմաշերմ ողջոյնները իմ յայտ Յարգելի Պատրիարքիս ու բոլոր Սինդոսական Հարցմինչ կը կրկնեմ անոնց բուռն չնորհակալութիւնները և մինչ' կ'ըսեմ , կը կատարեմ իմ այս երջանիկ ու ա'յնքան պատուաւոր

պաշտօնս, անհամեմատ բարերախտ կ'զգամ ինքզինքս՝ որ այս պատեհ առիթւ, պիտի կարենամ, Գերադայժառ աէր, ինչդրեկ Ձեր Ս. Օրհնութիւնը»:

«ՄՕՆՍ. ՃԻԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ.— Թէրզիպաշխան Գերապոյժառի այս համարձակ, անկեղծ, թափիչ խօսքերուն վրովայ մեր եպիսկոպոսը չկրցաւ լուռ մնալ, ու ոտքի ելլելով յուզուած չընորհակալութիւնը կը յայտնէ:

«Կը զգացուի արդէն, կ'ըսէ, թէ Հայկական Սինոդոսի Ջատագովն է խօսողը, թէ՛ սիրան է որ կը խօսի ու ի յայտ կու գայ իր բոլոր կատարելութեամբ, արժանի Տանգէի լեզուին, արժանի Խալիոյ փառքին:

«Լիվոնաց իր Եպիսկոպոսին բերնով կը հատուցանէ Նորին Գերերջ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզիան Պատրիարքի ու բոլոր Սինոդոսական Հարց իր Երախտագիտութեան հարկը մեզ ուղղած իրենց խօսքերուն ու շուայլած գովեստներուն փոխարէն, գովեստներ՝ որոնց կրնան արժանի ըլլալ իմ կղերս եւ իմ քաղաքս, բայց որոնց իմ արժանի չըլլալս քաջ գիտեմ: Ամէն պարագայի մէջ՝ մէկ է մեր մտածումը, միակ մեր ազօթքը առ Աստուած. «Ո՛չ Դէ, Տէ՛ր, ո՛չ Դէ, այլ ահա՛սն քո՛ւս Կո՛ւր»:

«Եւ հիմա չնորհակալութեան տալովը ազօթելով Եկեղեցւոյ յաղթութեան համար, զեղունք մեր մաղթանքներն ու մեր ազօթքները Յիսուսի սրտին մէջ»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Վ Ս

* * Կ'ըսուի թէ Ապրիլ ամսոյ երկրորդ հնգետասանեակին մէջ Սրբազան Բահանյապետը նոր Կարդինալաժողով մը պիտի զուգարէ, նորընտիր Աւստրիացի եւ սլաւոնացի կարդինալներու ծիրանաւորական զլխարկը առլու համար, եւ պիտի անուանէ բազմաթիւ նոր Կարդինալներ, որոնց մէջ պիտի գտնուի իր զաղտնի մատրանապետը եւ երկու խալացի եպիսկոպոսներ:

* * Ամսոյս Յին Սրբազան Հայրն մասնաւոր ունկնդրութեան ընդունեցաւ բարձրագոյն Մասնաժողովն զոր ինքն իսկ կարգած է՝ Եկեղեցւոյ խաղաղութեան հրատարակուելուն հնգետասաներորդ դարաւոր տօնախմբութեանց համար, որոնք պիտի կատարուին լաւաշիկայ 1913 տարուան մէջ: Վսեմ. Կարդինալ Գասսէթթա՝ Պաշտպանը, եւ իշխան Մարիոյ Բիճի՝ յիշեալ մասնաժողովի անդամները ներկայացուցին Նորին Սրբութեան: Անոնց ուղղեց Սրբազան հայրն ազնիւ խօսքեր, հաւաստելով որ ինքն մեծապէս կը հե-

տարրերուի այս հանդիսաւոր յիշատակութեան, որ սահմանուած է յուշ ածելու Բրիտոնէութեան սլատմութեան ամենէն երեւելի թուականներէն մին, եւ օրհնեց մասնաժողովը եւ այն ամէնքը որ պիտի օգնեն անոր այս մեծ գործոյս մէջ, մաղթելով որ յաջողի ան ամբողջ աշխարհի մէջ զարթուցանելու քրիստոնէական զգացումը Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդութեան ներքեւ:

* * Վսեմ. Կարդինալներն՝ Ս. Վանութէլլի եւ Բամբոլլա Մարտի 14ին իրենց Կարդինալութեան քտանեւհինգամեակ Արծաթեղէն Յորեքեանը կատարեցին, ընտրուած ըլլալով 1887 Մարտ 14ին Կարդինալաժողովոյն մէջ: Այն ատեն առաջինն 53, իսկ երկրորդը 43 տարեկան էր:

* * Ի Հռովմ ամսոյս 12ին Անիմայի տեւտոնեան եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր եպիսկոպոսական Պատարագ մատուցուեցաւ, Չէր Ս. Գոլաբանական աղօթքովն, Պաւլէրայի խնամակալ իշխան Լուիզբօլտի ծննդեան իննսունը մէկերորդ տարին թեւակոխելուն առթիւ:

* * Հռովմ հասած եւ Վսեմ. Ժիրանաւոր Մէրի տէլ Վալէն ձեռնադրուած է Արհի. Նիքոլա Տօպլէչիչ, Արքեպիսկոպոս Անթիվարիի եւ Նախագահ Մոնթէնէկրոյի: Երբ Բուհանայապետին բով ընդունուեցաւ յունկնղրութիւն, անոր մատոյց խոնարհ եւ սրտազին մեծարանքն Մոնթէնէկրոյի թագաւորին, որ զայս յանձնարարած էր իրեն: Սրբազան Հայրն շատ հաճեցաւ Նիքոլա թագաւորին այս ազնիւ զգացումներէն, եւ խնդրեց Արհի. Տօպլէչիչէն որ իր անկեղծ շնորհակալիքը մատուցանէ Նորին վեհափառութեան: Եւ Արհի. Նախագահ Արք. ին ընծայեց փառաւոր Լանչախաչ մը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

* * Լրագիրներու կողմանէ այնչափ ժամանակէ ի վեր -- Երբ -- թէգրեղն զըրկուեցաւ ի Կաթողիկոսարան՝ ամսոյ 7, 20ին, Զօրեքշարթի երեկոյ, ժամը 7ին Ը. Ե.: Անով կը հաղորդուէր Կայսերական Իրատէն, որ կը դադրեցնէր Ամենապ. Թէրզեան Կաթողիկոսին Բ-Բէրէ-Բէ-Կաշտօնը: Նշանակուած պատճառներն անոնք ին զորս հակառակորդը այնքան յեղեղեցին վերջերս, մանաւանդ ի Հռովմ Սինոդոս զումարել, իբրեւ ընդ ազդեցութեամբ -- Եպիսկոպոսներ օծել՝ առանց ժողովրդային բարի վկայութեան, Աթոռոյ ստացումներու մատակարարութեան չընդունիլ արտաքին միջամտութիւն, եւ այլն:

Հիմա փափագելի է որ ի Նորոյ ստեղծուած այս դրութիւնը Նոր կնճիռներ չարուցանէ, յաւալի եւս արդիւնքներ չտայ, եւ չըլլայ «Յետինն չար քան զառաջինն»:

Այս կացութենէն դարդիս եւ յապագային յառաջ գալիք բոլոր չարեաց պատասխանատու պիտի մնան անոր հեղինակները:

* * Հինգշաբթի գիշեր ժամը 7ին պատուիրակութիւն մը եկաւ ի Կաթողիկոսարան եւ տեսակցութիւն մը ունեցաւ հոն բնակող Եպիսկոպոսաց հետ: Ասոնք բացարձակապէս յայտարարեցին թէ Կաթողիկոսական իշխանութիւնը մի միակ Ս. քահանայապետէն կախումն ունենալով, կը շարունակէ մնալ անվթար Հռովմայ Ս. Աթոռէն ճանչցուած Ամենապատիւ Թէրզեան Պօղոս Պետրոս ԺԴ. Կաթողիկոսին վրայ, եւ աշխարհական ո եւ է իշխանութիւն չկնար անոր ո եւ է կերպով վնասել: Նոյնպէս յայտարարուեցաւ թէ Սագրեղ-աղաճի Կաթողիկոսարանը անբռնաբարելի է, նոյնիսկ պաշտօնական գործառնութեանց համար, իբր բնակարան Կաթողիկոսի ի սկզբանէ անտի. եւ միայն բռնութիւնը կրնայ զօրել ասոր դէմ, եւ թէ ո եւ է եկեղեցականի կարելի չէ ներկայ զսնուիլ Պուլքուլթուի ընթերցման, ուր որ ալ ըլլայ. եւ թէ ներկայ գերագանցապէս կնճռեալ վիճակին մէջ գործելու հրահանգը կը սպասուի Ս. Աթոռէն:

* * Ինչպէս սկիզբէն ի վեր թերթերը սուտ յերիւրուած եւ միշտ չափազանցուած

հրատարակութիւններով աշխատեցան մտքերը վրդովել այս խնդիրներու մասին, վերջին օրերուն մէջ ալ բոլորովին ստալոյ լուրերու ասպարէզ մը դարձան, անխղճօրէն վրէժ լուծելու համար. իբրեւ թէ կաթողիկոսարանէն վաւերաթուղթեր, արժէքսուոր առարկաներ, եւլն. փախցնելու հետամուտ եղեր են պաշտօնեայր, եւ այլ սոցին նման ցածոցի ենթադրութիւններ: Ապշահար ըլլալու բան է տեսնել սոյնօրինակ անհեղեղ եւ անբարոյ ենթադրութեանց եւ անխիղճ սուտերու այսքան դիւրին շրջաբերութիւնը, որով կ'ուզուի ապականել ընդհանրութիւնը: Տա՛յր Աստուած որ այսպիսի փխուր երեւոյթ մը չափ չըլլար միջավայրին դաստիարակութեան եւ բարոյական տրամադրութեանց:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

* * * ԲԵՆԵՔԻՆԻԱՆ.— Մարտ 6ին մայրաքաղաքս հասաւ նախկին Վարչապետ փաշա՝ Աղեքսանդրիայէ: Բազմաթիւ անձնաւորութիւններ զինք դիմաւորելու գնացած էին քարափ: Նոյն օրը կէս օրէն վերջ, Բեամիլ փաշա Կայսեր ներկայացաւ ու մեծարանքներու արժանացաւ: Գետական շատ մշտններ նորին վսեմութեան ապարանքը գնացին բարի զաւուստ մաղթելու: Բեամիլ փաշա մեծ դրուատեօք խօսեր է, Աղեքսանդրիայէ դեռ չմեկնած, Եգիպտոսի արդի կառավարութեան վրայով. իսկ ներկալ պատեւրագմի մասին քննադատած է Իտալական կառավարութեան բռնած ընթացքը:

ՄԵԼԷՆԻ ԶԵՐԷ.— ՍԵՐԷՆԻ լրագրին տէր եւ տնօրէն Մէլվան զատէ Բիֆաթ պէյ, որ Պատ. Ատեանի կողմէ դատաւարտուելով, խոյս տուած էր Եւրոպա, եւ Աթէնքի մէջ կը հրատարակէր վերջերս ձեռք լրագիրը, առնել մ'ի վեր Գօմիթէի հասցէին սկսած էր դրուատալից յօդուածներ մը հրատարակել. ու թերեւս ասով խրախոյս առած անցեալները Պոլիս վերադարձած էր: Բայց ձերբակալուելով յանձնուեցաւ Ընդհ. Ապահովութեան Տնօրէնութեան եւ զրկուեցաւ ի Պրուսա:

ԱՄԷՆԻ ԴԵՆԷՔԻՆԻ.— Երկուշաբթի օր (մարտ 5) Զանգըրը Իսմայիլ անուն անձի մը կողմէ Ատիէն հրդեհելու փորձ մ'եղաւ: Բայց լուցկիով իր թափած քարիւղը բռնկցուցած միջոցին՝ սպասաւորներէն մին վրայ հասնելով մարեց: Իսկ չարագործը ձերբակալուելով՝ յանձնուեցաւ արդարութեան ձեռքը: Այս հրձիգութեան շարժառիթը դեռ գաղտնիք մը կը մնայ:

* * * ԽԱՂԱՆԻՆԻ.— Մայրաքաղաքիս Օտար Դեսպանները, Բ. Դուռ եւ թալով Իտալիոյ հետ խաղաղութեան մասին տեսակցած էին Ասլմ պէյի հետ. եւ առանց ներկայացուած առաջարկները պաշտօնապէս հաղորդելու, նախ ուզած են զխանայ թէ ինչ պիտի պատասխանուի զայնս ներկայացնել ուզած ատեննին: Ասլմ պէյ նախադարձ Խորհուրդին որոշման համաձայն, յայտարարար է թէ, Իտալիոյ կողմէ Տրիպոլիսը իւրացնելու պայմանաւ հաշտութիւն կնքել անկարելի է:

* * * ԻԼԷՆԻ ՍԱԳԷՏԻՆԻ.— Վերջերս Եւրոպայէ մայրաքաղաքս հասնելով Կայսերական մեծարանաց արժանացաւ:

* * * ՍԱՐԷՆԻ ԶԵՐԷ:— Դռնակաւոր վարդապետն աղամանղը՝ որ վերջերս Բարիդի մէջ ի վաճառ հանուեցաւ, Հնդկաստանի էն հարուստ մէկ հանքէն գտնուած է եղեր, եւ որ 5 դարերէ ի վեր Թուրքիոյ Սուլթաններուն կը պատկանէր: Այս աղամանղը կը կշռէ լինը քրաթ ու մօտաւորապէս 100,00 ֆր. գնահատուած է:

* * * ՄԵԼԷՔԻՆԻ.— Բումէլիի բարեկարգիչ յանձնաժողովին վրայ, որու նախագահն էր Ներքին գործոց նախարար Հաճի Ատիլ պէյ, հրոսախումբ մը յարձակեր է Տրին գետի ծախ ափանց մօտերը մարտ 4ին, բայց նախագահն ու միւս անդամները զերծ մնացած են զնդակներէն ու միայն երկու հոգի վիրաւորուած են:

* * Մասնաւոր օրէնք.— Կայսերական իրաւէ մը վաւերացուց Մամուլի նոր օրէնքը, եւ որ գործադրուիլ սկսաւ Մարտ 5/18էն սկսեալ: Աոյն օրէնքին համաձայն, լրագիրներու եւ պարբերականներու արտօնատէրերը 21 տարին լրացուցած, դատապարտութիւն չկրած անձեր պէտք են ըլլալ: Ինչպէս նաեւ բարձր վարժարանէ կամ եօթր տարուան դասընթացը ունեցող իտալիցէյէ շրջանաւարտ կամ անոր համագոր կրթութիւն ստացած պէտք են ըլլալ: Պոլսի մէջ 500 եւ գաւառներու մէջ 100 ոսկի երաշխաւորութեան գումար պիտի տան օրաթերթ հրատարակողները, իսկ պարբերաթերթ հրատարակողները՝ Պոլսի մէջ 200 իսկ գաւառները 50 ոսկի պիտի տան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐ

* * Լաւաշի կը հեռագրուի թէ, երեսփոխանական ժողովին մէջ Մր. Էսքուիթի յայտարարութեան համաձայն, Մարտ 18ին պիտի ներկայացնէ հանքագործներուն նուազագոյն թոշակի օրինագիծը, որպէս զի մինչեւ հինգշ. քուէարկուի: Նուազագոյն թոշակը որոշեալ քանակով օրական մըն է, օ. հ. 45 դրկ. որ ու եւ է գործաւորի անհրաժեշտօրէն պիտի հասուցուի, բնականաբար աւելի վճարելով հին, աւելի փորձառու, աւելի աշխատող եւլն. գործաւորի:

* * Բարիգէ եկած լուրի մը համաձայն, Արեւելեան խնդիրներու մասին, Ռուսիոյ եւ իտալիոյ միջեւ զաղտնի համաձայնութեան մը կնքուելու մասին շրջած զրոյցը հետզհետէ կը հաստատուի: Արդէն, կը յստի թէ Մայիսին վերթոր Էմմանուէլ պիտի այցելէ Զարին, ինչ որ շատ կարեւոր կը նկատուի քաղաքական շրջանակներու մէջ:

* * Կովկասի մէջ Ռուսիա մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէ: Հրաման եղած է որ հոն գտնուող բոլոր պետական ու մասնաւոր վարժարանները պատրաստ ըլլան առաջին հրամանին զինուորական վարչութեան յանձնելու իրենց շէնքերը: Շատ մը կեդրոններու համար այժմէն զինուորական կառավարիչներ որոշուած են: Մեծաքանակ յանձնարարութիւններ կ'ըլլան պատերազմի համար, բայց թէ ինչ նպատակաւ այս բոլոր միջոցները կ'աւանդին՝ դեռ չէ ճշդուած: Թուրքիան փաշայի մէկ դիմումին վրայ, կառավարութիւնը յայտարարեւ է թէ, ոչ թէ Թուրքիոյ՝ այլ Պարսկաստանի նոր կնճռոտութիւններու առջեւ նախագգուշութեան համար կը համախմբէ իր զօրքերը:

* * Պարսկաստանի անչափահաս Շահը, որ 15 տարեկան է կ'ամուսնանայ Գամասներու ընտանիքէն 12 տարեկան իշխանուհիի մը հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լեւոն Ժ. Ի. Խաւսական մեկ խօսք	97
Ասանա Լայ. քնքն բեմիցէ գապուլիյէթի	99
Կեսարիոյ Եպ. Ին ընդունելութիւնը	101
Պիւր Ֆուգարաբէրվէր ճեմիյէթի	104
Անկիւրիոյ Եպ. Բ. Լիվաւնոյ քաղաք	106
Տեղեկագրականք	109

Արտոնատէր
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



Տճօրէն-Խմբագրատեղ
ԳԵՈՐԳ Մ. ՎՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ռ. ՍԱՎԱՆԵԱՆ
Կալաթա Գուրուցլու խան

ԿԱՐԵԻՈՐ

Մեր հիմն թաժանորդաց կը շարունակենի զրկել Կարօղիկէ Արձագանգի թիւերը: Սակայն պէ՛տք կը զգանք յայտարարելու թէ այլեւս պիտի դադրեցնենի զրկելու անոնց որ չեն փութար թաժանորդ գումիլ: Հետեւեալ անոնք որ կ'ուզեն ունենալ այս օգտակար թերթը, հաճի՛ն փութով իրենց թաժանորդագիրը հասցընել թերթիս Տնօրէնութեան:

«Բաժնեգիրներն կ'առարուին Տնօրէն-Խմբագրապետ Դէորդ Ե. Վ. Թէրզիպահանի հասցէին»:

Ա.Զ.Դ.

Աթոռանիստ Ա. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ (Բերա, Սազըզ-Աղաճ) լուր օրերու թիւ պատարագաց ժամերն են. 7, 8, 9, 10 եւր. իսկ կիրակի ու տօն օրերը՝ ժամը 7.30, 8.30, 9.30, 10.30 եւ 11.30ին կը մատուցուին Ա. Պատարագները:

Սոյն Մեծ Պահոց ամէն Ուրբաթ առաւօտ եօթն իոցի ջերմեռանդութիւնը կը կատարուի եւ օրհնութիւն կը տրուի ի ժամ 9.30: Իսկ Կիւրակէ օրեր, ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, ԲԱՐՈՋ Թուրքերէն լեզուաւ եւ Օրհնութիւն տեղի կ'ունենայ ի ժամ 4:

Գարողիչն է Գեր. ՄԱՏԹ. Ե. Վ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

